# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը**

Արթուր Մարտիրոսյան

Սարգիս Հայոցյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 15-17 նոյեմբերի, 2022 թվական

**4. Հրավիրող կողմը**

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենություն:

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի առաջին նիստին:

**6. Քննարկված թեմաները**

- Եվրոպական հետազոտական տարածքում համագործակցության ընդլայնման և զարգացման նոր մոտեցումները,
- «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության արդյունքները (2021-2022 թթ.), ֆինանսական ներդրման չափը,
- «Հորիզոն Եվրոպա» ծրագրի 2023-2024 թթ. աշխատանքային ծրագիրը,
- ՀՀ գիտական համայնքի Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման գործընթացը, ԵՄ «Քաղաքականության աջակցության գործիք» ծրագրի

շրջանակում փորձագիտական երաշխավորությունների ներդրման ընթացքը, նոր հայտի ներկայացման հնարավորությունը,

- Արևելյան գործընկերության հետազոտությունների և նորարարության աշխատանքային խմբի գործունեության շրջանակում ԵՄ-Հայաստան համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>**

Նիստի օրակարգում ընդգրկված էին մի շարք հարցեր, որոնք բխում են Հայաստանի՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին մասնակցության մասին համաձայնագրի դրույթներից, մասնավորապես՝ ՀՀ ֆինանսական ներդրման կանոնները, 2021-2022 թթ. մասնակցության արդյունքները, ծրագրի ազգային կոնտակտային անձանց և ծրագրային կոմիտեների անդամների գործունեությունը, 2023-2024 թթ. աշխատանքային ծրագիրը, «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության ակտիվացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ինչպես նաև մի շարք հարցեր, որոնք առնչվում են ՀՀ գիտական համայնքի Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման գործընթացների խթանմանը, մասնավորապես՝ ԵՄ «Քաղաքականության աջակցության գործիք» ծրագրի շրջանակում փորձագիտական երաշխավորությունների ներդրման ընթացքը և Արևելյան գործընկերության հետազոտությունների և նորարարության աշխատանքային խմբի գործունեության շրջանակում ԵՄ-Հայաստան համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Ըստ վիճակագրական տվյալների՝ նոյեմբեր ամսվա դրությամբ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ կողմից ներկայացվել է 41 հայտ, որոնցից 5-ն արդեն իսկ երաշխավորվել են ֆինանսավորման ՀԵ տարբեր մրցույթների շրջանակներում և պայմանագրերի կնքման աշխատանքներն ավարտված են, իսկ 3 ծրագրերի վերաբերյալ առկա են դրական որոշումներ, պայմանագրերի կնքումը ընթացքում է: Ա. Մարտիրոսյանը և Ս. Հայոցյանը ընդգծեցին, որ 2021-2022 թթ. մասնակցության ցուցանիշները (ՀՀ հաջողության գործակից՝ 15,56 տոկոս է) գերազանցում է ԵՄ Հորիզոն 2020 շրջանակային ծրագրին մասնակցության երկամյա արդյունքները: Ա. Մարտիրոսյանը նշեց, որ մասնակցության այդ ցուցանիշը արդյունք է այն միջոցառումների, որոնք իրականացվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ գիտության կոմիտեի կողմից: Կողմերը կարևորեցին տեղեկատվական միջոցառումների

շարունակականության, ազգային կոնտակտային անձանց վերապատրաստման և նրանց գործունեության ակտիվացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ԵՀ փորձագետների ներգրաացմամբ:

Արթուր Մարտիրոսյանը նշեց, որ այժմ իրականացվում են ՀՀ գիտության ոլորտի լայնամասշտաբ բարեփոխումների ծրագիր, և ՀՀ կառավարությունը մեծապես նպաստում է դրանց իրականացմանը: Սարգիս Հայոցյանը ներկայացրել է ՀՀ կառավարության 2021-26 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված գիտության ոլորտի միջոցառումները, դրանց ընթացքն ու ակնկալվող արդյունքները:

Ա. Մարտիրոսյանն ընդգծեց նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ բուհերի և գիտական կազմակերպությունների մասնակցության ակտիվացման և ՀՀ գիտական համայնքի եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման ուղղությամբ Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության և համատեղ տարվող աշխատանքների շարունակականության կարևորությունը: Մասնավորապես ընդգծվեց Եվրոպական միության կողմից տրամադրվելիք ֆինանսական աջակցության շրջանակներում «Հորիզոն Եվրոպա» ծրագրին մասնակցության վճարի 50 տոկոս փոխհատուցման հարցը, ինչը հնարավորություն կստեղծի ՀՀ գիտական համայնքին առավել ակտիվ ընդգրկվելու «Հորիզոն Եվրոպա»-ի տարբեր ենթածրագրերում:

Նիստի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև «Հետազոտությունների և նորարարության «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրով նախատեսված Փոխադարձության սկզբունքի ներքո ՀՀ կողմից իրականացվող ծրագրերում ԵՄ իրավաբանական անձանց մասնակցության հնարավորությունների ստեղծման հարցին: Ս. Հայոցյանը ներկայացրեց Գիտության կոմիտեի կողմից իրականացվող այն ծրագրերը, որոնցում, պայմանների որոշակի փոփոխություններից հետո, հնարավոր է նաև ԵՄ գիտնականների մասնակցություն: Կողմերը պայմանավորվեցին շարունակել հարցի քննարկումը աշխատանքային կարգով:

Կողմերը կարևորվեցին նաև ՀՀ մասնակցությունը Եվրոպական հետազոտական տարածքի ֆորումի տարբեր աշխատանքային խմբերում, ընդգծեցին նաև Արևելյան գործընկերության հետազոտությունների և նորարարության աշխատանքային խմբի

գործունեության շրջանակում ԵՄ-Հայաստան համագործակցության ընդլայնման կարևորությունը:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Նիստի մեկնարկին ընդառաջ Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի համանախագահներ Ա. Մարտիրոսյանը և Ա. Հագլունդ-Մորիսին ստորագրեցին Համատեղ կոմիտեի գործունեության կարգն ու ընթացակարգերը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ ընդունվեցին գործառնական եզրակացություններ, որոնց շրջանակում Կողմերը կշարունակեն համագործակցությունը և աշխատանքային շփումները:

Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի անդամներին ընդունեց ԵՀ հետազոտությունների և նորարարությունների հարցերով գլխավոր տնօրենության ղեկավարի պաշտոնակատար Ս. Ռացոն: Փոխանակվեցին կարծիքներ հանդիպման արդյունքների վերաբերյալ:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի 2-րդ նիստը կանցկացվի 2023 թվականին Երևանում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

Արթուր Մարտիրոսյան

21.11.2022թ.